

# ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ

Միսաք Մեծարենցի անվան հ 146 հիմնական դպրոց

ՄԿԱ-ի գծով տնօրենի տեղակալ  
Բնֆորմատիկայի և ֆիզիկայի մասնագետ Մարիետա Դավրիշյանի Պավլուշայի

## Ծնողական ժողովի նպատակը՝

Խոսքս ավելի դյուրին, հետաքրքիր, յուրովի ծնողներին ներկայացնելու նպատակով, այն վեր եմ անել խոսք-խաղի, չափածո բառախաղի, որը կարծում եմ արագ, մատչելի կրնակավի ծնողների կողմից՝ Համացանցում առկա վտանգներից խուսափելու և այս բնագավառում գիտելիքներն զարգացնելու նպատակով, հասկանալու, որ համացանցը օգտագործելիս պետք է լինել ծայրահեղ զգույշ և պատասխանատու, մշտապես ուշադրություն դարձնել երեխաների Համացանցից օգտվելու ռեժիմին, Համացանցից ճիշտ և ապահով օգտվելու կանոնների իրազեկմանը:

## Օրակարգում՝

1. Համացանց՝ կրթական մշակութային և տեղեկատվական հնարավորությունների ներկայացում:
2. Համացանցի վտանգների ներկայացում:
3. Ապահով Համացանց ապահովելու համար՝ ապօրինի, վնասակար և ոչ պատշաճ բովանդակության դեմ պայքարի միջոցների և գործիքների ներկայացում:
4. Ծնողների հետ համատեղ Համացանցի ապահով օգտագործման կանոնների մշակում:

## Գրատախտակ՝

Միասին ստեղծենք էլ ավելի ապահով ու արդյունավետ համացանց ...

Ծնողական ժողովի սկզբում՝ ողջունից հետո ծնողներին կբացատրվի ժողովի բուն նպատակը և կբաժանվեն համացանցի մասին հաճախակի տրվող հարցերով հարցաթերթիկներ և ապահով համացանցի կանոններն ու խորհուրդները: Հարցաթերթիկը նույն ծնողը կլրացնի ժողովից առաջ և հետո: Ժողովի ավարտից հետո կհամեմատվեն հարցաթերթիկների պատասխանները: Եթե ծնողական ժողովի նպատակը հասկանալի է եղել և յուրացվել է ծնողների կողմից, տրվել են համացանցից ապահով օգվելու բազմաթիվ հարցերի պատասխաններ, ապա հասել են նպատակիս: Կարծում եմ ականհայտ կերևա ժողովի արդյունավետությունը:

Ներայացնում եմ աքրոստիկոս **ԱՊԱՀՈՎ ՀԱՄԱՑԱՆՑ**, որը վերաբերվում է մեր ընդհանուր ցավին՝ Եղեռնի 100 ամյակին:

**Ա**շխարհն այսօր

**Պ**ահանջում է՝

**Ա**նմնացորդ

**Հ**իշել նրանց,

**Ո**վ որ խոսքին հավատում է,

**Վ**առ կմնա հույսը նրանց:

**Հ**իշենք նրանց՝

**Ա**նմեղ մարդկանց,

**Մ**եր պապերին՝

**Ա**վա՛ դ, զոհված:

**Ց**ավ ապրելով,

**Ա**րդար դատով,

## **Նորից-նորից**

### **Ցմահ ցավով ...**

Ծնողական ժողովից 2 օր առաջ մշակել եմ հարցաթերթիկ և փոխանցել ծնողներին:

### **Ծնողական ժողովի պլանը**

1. Ողջունի խոսք, նախապատրաստական մաս, ծնողական ժողովի նպատակի ներկայացում, հարցաթերթիկների նախնական լրացում – 5րոպե
2. Համացանցի հնարավորությունների ներկայացում – 10 րոպե
3. Համացանցի վտանգների ներկայացում – 10րոպե
4. Վնասակար, ապօրինի և ոչ պատշաճ բովանդակության դեմ պայքարի միջոցների և գործիքների ներկայացում/բեմադրություն/ - 10րոպե
5. Քննարկումներ – 5րոպե
6. Ամփոփում / հարցաթերթիկների վերջնական լրացում և համեմատում / – 5րոպե

Ծնողներ՝ մեր հարգելի,

Դաս է այսօր հիրավի,

Այն կկոչվի զբոսանք

**Համացանցում** սիրելի:

Հայրիկներ՝ ր և մայրիկներ՝ ր,

Տատիկներ՝ ր և պապիկներ՝ ր,

Եկե՛ք նստենք և լուրջ խոսենք,

Թե ուր տանենք, տեղավորենք

**Համակարգիչը** մեր նոր դարի:

Դ՛ե, իհարկե՛, տան կենտրոնում,  
Կամ էլ դնենք հենց այն տեղում,  
Որտեղ որ մենք գործ ենք անում,

**Վերահսկենք** խաղը՝ տեղում:

Մեր սիրելի ծնողնե՛ր,

Խնդրում ենք Ձեզ **զգույշ լինել**,

Համացանցում ամեն բան

Պետք է **ստուգել** ամեն ժամ:

Թե ցանկանանք սավառնել, լողալ,

Երգել ու պարել,

Նոր ընկերներ ձեռք բերել,

Եվ նոր կապեր հաստատել,

Ճիշտ պետք է մենք միշտ վարվենք

Որ **ապահով** ճամփորդենք:

Համացա՛նց խորհրդավոր,

**Օգտակար, բայց վտանգավոր,**

Նրանց համար՝ բոլորի,

Ովքեր չունեն **բանալի**

Ապահով մուտք գործելու,

Շատ լավ գործեր անելու:

Ելքեր, մտքեր փնտրելու

Ճիշտ, ապահով սահելու:

Համացանցի էջերում

Ժամանակն է հեշտ թռչում,

Եվ բալիկներն անհամար,  
Նույնիսկ չեն էլ նկատում,  
Թե ինչպես է օրն անցնում:  
    Համացանցի էջերում  
    Հազարավոր բալիկներ  
Մեկ դասերն են պատրաստում,  
**Մեկ տեղեկություն** են փնտրում,  
Մեկ էլ հանկարծ **մուրրվում:**  
    Մեր սիրելի՛ ծնողներ,  
Թե զավակիդ միշտ խոնարհ,  
Օգնես, կրթես, հասկանաս,  
**Ինքդ պետք է նախ սերտես**  
**Կանոնները բավարար:**  
    Համացանցը մեր բարի  
Մինչ **ժամանցի** վայր լինելը,  
Ունի բազում **գաղտնիքներ,**  
Պետք է լինել լուրջ, խոհեմ,  
**Չվստահել** ոչ ոքի,  
**Չարձագանքել** ոչ մի ստի:  
    Թե բալիկիդ շնորհալի  
Ցանկանում ես ճանաչել,  
Դժվար ու նեղ պահերին  
Ձգտիր կողքին միշտ լինել:  
Դրա համար ի՞նչ է պետք,

Լոկ փոքրիկ մի ուղեցույց,  
Որ կոչվում է **safe.am**՝  
**Կանոնները** ես գիտեմ:  
Մայրե՛ր, ուշադի՛ր եղեք,  
**Հիշե՛ք կանոնները վարվելու,**  
Մի՛ մոռացեք անզգույշ քայլ,  
Ու կլինի քար ու ժայռ:  
Իսկ թե խելացի լինեք,  
**Safe.am**-ին համակրե՛ք,  
Համացանցը անսահման  
**Կդառնա Ձեզ ապաստան:**  
Համացանցում լա՛վ հիշեք,  
Եղե՛ք խոհեմ ու արի՛,  
Ու ամենից կարևո՛րը,  
**Մտածված, քաղաքավարի:**  
Վիրավորանք ու հայհոյանք  
Չի՛ կարելի թույլ տալ, երբե՛ք,  
**Հիշե՛ք, լսե՛ք, ակա՛նջ արեք,**  
Ձեր կատարած արարքները  
Բնավ անհետք մի՛ թողեք:  
Երբ խաղում է երեխան,  
Միացի՛ր դու էլ նրան,  
Ձեռքդ անուշ ուսին դի՛ր,  
Ընկերակցի՛ր ու խոսի՛ր:

Երբ լավ ընկեր դու դառնաս,

Նրա սիրտը կկարդաս,

Վստահություն կշահես

Երեխային հետ կպահես

Կորուստներից ետ կքաշվես:

Այս նոր կյանքում կարևոր է

Շփվող լինել, **ինքնակրթվել,**

Նոր ընկերներ միշտ ձեռք բերել:

Բայց միշտ հիշե՛ք **Ձեր անձնական տվյալները,**

**Ոչ-ոքի մի՛ վստահեք:**

Անձանոթին, թե որ գրես,

Երբեք չափը հանկարծ չանցնես,

Եվ թե վատ բան դու նկատես,

Արագ մեծին կզգուշացնես:

Թե ուզում եք Ձեր երեխան

Գերխաղերի ցանկից օգտվի՝

Նրա ցանկից խաղը ընտրեք,

Skip-ը նրան խիստ արգելեք:

Քմձիծաղով չմոտենաք,

Հստակ ցուցակ դուք սահմանեք,

**Կարևոր է ձեր դերը,** ձեր կառուցած ռեժիմը,

Երեխայի ժամերը:

Թե ինչը, երբ է նայում,

Որը, որից է բխում:

Լա՛վ ընթերցիր նամակները  
Ու տարբերիր Phishing-ները,  
Մի՛ տարվիր դու շահումներով,  
Սուտ խոսքերով, առաջարկով:

**Հիշի՛ր.** այստեղ մի լուրջ սխալ,

Եվ կկանգնես գլխիվայր,  
Շուտ կգա շտապ կյանքը լավ,  
Կդառնա ժայռ, քար և դավ:  
Օգտագործի՛ր Anti-Phishing,  
Կամ էլ anti-spam ու հիշի՛ր,  
Խուսափենք մենք վտանգից,  
Անիմաստ մուտքագրումից:

**Ձտոդ, ֆիլտրոդ ծրագրերը**

Շտափ կփակեն բաց <<դռները>>,

Որ ամեն մի արժող, չարժող  
Մուտք չգործեն մեր տները:  
Դե իսկ հիմա այցելենք մենք

Sip-Bench կայքը,

Ի՛նչ հրաշք է, շատ օգտակար

Համակարգ է ...

Չմոռանանք լրտեսներին,

Թարմացնենք միշտ զինվորներին,

Որ շատ որսան **վիրուսներ,**

**Ճանաչեն հակավիրուսներ:**



Վնասակար, ապօրինի և ոչ պատշաճ բովանդակության դեմ պայքարի միջոցների և գործիքների ներկայացում /բեմադրություն/ - **Վիրուս և հակավիրուս:**

Դպրոցական աղջիկը նստած համակարգչի առջև խաղում է, զվարճանում, երաժշտություն լսում: Հանկարծ նկատում է, որ ծրագիրը դանդաղեց, երաժշտության ձայնը կտրտվեց, մկնիկը սկսեց չենթարկվել իրեն: Նա շատ է վախենում և դիմում նստած ծնողներին՝ փրկելու համակարգիչը: Ծնողները անմիջապես փոքրիկ սավառնակների թևերով հաղորդագրություններ են ուղարկում փոքրիկին: Հուզված աղջիկը կարդում է հաղորդագրությունները, մաքրում արցունքները, հասկանում, որ համացանցում էլ դեղ ու դարման կա, որ այստեղ էլ պետք է լինել ծայրահեղ զգույշ, թույլ չտալ վիրուսներին մուտք գործելու համակարգիչ, իսկ եթե մուտք են գործել, ապա օգտագործելով համապատասխան հակավիրուսներ վերացնել դրանք: Դպրոցականը շարունակում է զվարճանալ: Համակարգիչը փրկված էր:

Չօգտագործենք ծրագրեր,

Որոնց վարքին ծանոթ չենք:

Անծանոթ բարդ նոր կայքերը

Աշխատենք մենք չգործածել:

Ձերձ մնացեք դարի մահից

**Համակարգչային կախվածությունից,**

Հեշտ է, լավ է չվարակվել,

Ոչ թե երկար **բուժում բեռնել:**

Դե՛, իսկ այժմ ժամն է եկել,

Որ ես լսեմ Ձեր հարցերը, մեր սիրելի՛ ծնողներ...

- Ի՞նչ գաղտնաբա՞ռ, ...

-Դե՛, իհարկե՛, **բարդ** գաղտնաբառ,  
Ու այնպիսի, որ ոչ մեկը չկասկածի:

Նույնիսկ թղթին մի՛ վստահիր,  
Ոչ մի տեղ էլ այն մի՛ գրիր:

-Եթե, իրոք, չես ճանաչում,  
Չես էլ ուզում կապ պահպանել,  
Ունես արագ դու որոշում.

**Այն կոչվում է «արգելափակում»:**

-Երբ պետք չէ քեզ վեր-խցիկը,  
Երկար-բարակ մի՛ մտածիր,  
Խնայի՛ր դու քո հոսանքը  
Եվ անջատի՛ր ցուցարկիչը:

-Շատ հավատալ չի կարելի,  
Երբ կարդում ես ու կասկածում,  
Արագ ստուգի՛ր, բացահայտի՛ր,  
Մեծին հայտնի՛ր, մի՛ վստահիր: